

616.91
5-88

ՄՇԱԿ. Ա. ՌՈՂՋ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Վ. Մ. ՄՈՆՈԽԶՈՒ

Փ ՈՒԹԵԾԸ

ՅԵՎ.
ՆՐԱ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԸ

04 JUL 2013

616.91
5-88
մար.

30 JUL 2010

ԱՐԵԱԿ Ա. Ա. Ա Դ Հ Կ Կ Յ Ա Ն Ք Ի Հ Ա Մ Ա Ր

ԲԺԻՇ Մ. Վ. ՄՈՒԽՈՍՅՈՆ

Մայրության և մանկության ապահովության
Ազով - Սեծովյան յերկրային ինստիտուտ

1008
38485

ՔՈՒԹԵՇԼ
ՅԵԿ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

3964

3

ՊԵռֆ. Ի. ՅԱ. ՍԵՐԵԲՐԻՅԱԿՈՒ
լումբագությամբ

Թարգմ. Հ. ԲՈՂԻԱՆՅԱՆ



Ազիատավորների առողջապահության համար
մղվազ պայքարում, այլ միջացառումների հետ
միասին, շատ մեծ նշանակություն ունի ՄՈՒ
ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴԻՑՅՈՒՔԻՆԵՐԻ ԼԱՑՆ ԾԱՎԱԼՈՒՄՆ ԱՇԽԱ-
ՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԶԵՎ:

Մայրուրյան յեվ մանկուրյան պահպանու-
թյան յերկրային ինսիստուտը, Ազով-Մեվճավյան
հրատարակության հանձնառարարությամբ, կազ-
մել է մի շարք համբաւաչելի բրույարեներ,
վարօնիք վերաբերված են հիգիենայի յեվ մոռ
ու մանկան առողջապահության հարցերին:
«Քուրեք յեվ երա դեմ պայքարելու միջոց-
ները» բրույուրը կազմել է ինսիստուտի գիտա-
կան աշխատակից բժ. Մ. Վ. Մոնուշոնիք,
պրոֆ. Ի. Յա. Սերեբրիյանի խմբագրությամբ:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶՈՎ-ՄԵՎՃԱՎԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԻՆՉ Ե ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Վարակիչ կոչվում են այն հիվանդու-
թյունները, վորոնք առաջանում են կենդա-
նական որգանիզմը թափանցող միկրոբներից:

Միկրոբներն — այն շատ մանր, հասա-
րակ աչքով անտեսանելի կենդանի եյակ-
ներն են, վորոնք տեսնվում են միայն ման-
րադիտակ (միկրոսկոպ) կոչվող գործիքով.
Այդ մի գործիք ե, վոր մի քանի հարյուր
անգամ խոշորացնում ե հետագոտվող առար-
կան:

Միկրոբներից վոմանք այնքան մանր են,
վոր նույնիսկ հազար անգամ խոշորացնե-
լուց հետո յել յերեսում են իբրև կետեր:
Որգանիզմը մանող միկրոբներն սկսում են
բազմանալ ու թույներ արտադրել. այդ թույ-
ներն են, վոր թունավորում են որգանիզմը
և նրա հիվանդացումն են առաջացնում:

Հիվանդության ընթացքն ու բնույթը
բազմաթիվ պատճառներից են կախված,
ինչպես՝ որգանիզմը մտած միկրոբների
քանակից, նրանց բազմանալու արագու-
թյունից, նրանց արտադրած թույնի ու-
ժից, նույնպես և որգանիզմի դիմադրա-
կան ուժից:

Ինչքան շատ միկրոբներ մտնեն որգա-
նիզմը, ինչքան ավելի արագ նրանք բազ-
մանան, ինչքան ավելի ուժեղ լինի նրանց
արտադրած թույնը և ինչքան ավելի թույլ
լինի որգանիզմի դիմադրականությունն այդ
բոլորի հանդեպ, — այնքան ավելի ուժեղ և
սուր կերպով կարտահայտվի ու կընթանա
հիվանդությունը, և այնքան նվազ կլինի
որգանիզմի հաղթանակի, այսինքն առողջա-
նալու հույսը:

Յեվ ընդհակառակը, փնրքան քիչ միկրոբ-
ներ թափանցեն որգանիզմը, փնրքան ավելի
դանդաղությամբ բազմանան նրանք, փնրքան
ավելի թույլ լինի նրանց արտադրած թույնը
և փնրքան ավելի դիմացկուն լինի որգա-
նիզմը, — այնքան ավելի բարեհաջող ընթացք
կունենա հիվանդությունը և այնքան ավելի
հույս կլինի, վոր հիվանդությունը կեր-
ջանա լիակատար բուժմամբ:

ԻՆՉՊԵՍ Ե ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ՔՈՒԹԵՇԸ

Վարակիչ հիվանդությունների թվին ե
պատկանում նաև քութեշը (տեղական բար-
բառով «ալկելմեկ»). Ծան. թարզվ.): Քութեշը
հիվանդությունն առաջացնող միկրոբները
շատ հեշտությամբ են փոխանցվում հիվանդ
մարդուց առողջի վրա թե՛ անընդմիջապես՝
հարաբերության միջոցով, և թե՛ զանազան
իրերի և առարկաների միջոցով, վորոնցով
ոգովել կամ ոգտվում ե հիվանդը: Դրա
համար, հիվանդությունը կանխող համա-
պատասխան միջոցների բացակայության
դեպքում, քութեշը կարող ե տարածվել չա-
փազանց արագ կերպով ու խոշոր չափերով:

Վորովհետև այս հիվանդությունը ծանր
տեսակներից ե, տեսում ե յերկար և ունե-
նում ե մի շարք վտանգավոր բարդություն-
ներ, վորոնք յերեմն մնում են մինչև
մահը, — զրա համար քութեշը հանդիսա-
նում ե մի շատ լուրջ հիվանդություն:

ՈՎ Ե ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՔՈՒԹԵՇՈՎ

Թեև քութեշը հիվանդանում են նաև
հասակավորները, բայց և այնպես դա գլխա-
վորապես մանուկ հասակի հիվանդություն ե:

Այսպես, որինակ, 1926 թվին, Մոսկվա-
յում, 10 հազար բնակչից քութեշղով հիվան-
դացել են.

Մինչև 1 տարեկան հասակում	66	հոգի
1 տարեկանից մինչև 4 տարեկան	296	"
5 » » 9 »	246	"
10 » » 14 »	84	"
15 » » 19 »	23	"
20 » » 29 »	8	"
30 » » 39 »	4	"

Ավելի ևս հազարայում են հիվանդու-
թյան դեպքերը 40 տարեկանից վեր հասա-
կում:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր քու-
թեշղով ամենից շատ հիվանդանում են 1 տա-
րեկանից մինչև 4, և 5 տարեկանից մինչև
9 տարեկան հասակում: Շատ ավելի քիչ են
1 տարեկան հասակի, չհասած յերեխաների
հիվանդության դեպքերը, իսկ մինչև 6 ամ-
սական հասակի յերեխաները հազիվ ե պա-
տահում, վոր հիվանդանան:

Նկատված ե, վոր այն մարդիկ, վորոնք
ապրում են տաք կլիմայում կամ այնպիսի
վայրերում, ուր արևային որերը շատ են,
ավելի քիչ են հիվանդանում քութեշղով, քան
հյուսիսում ապրողները, մանավանդ այն

վայրերում, ուր յերկարատև ձմեռն է տի-
բում, և արևոտ որերն ել քիչ են:

Սրա բացատրությունն այն է, վոր հյու-
սիսաբնակներն ստիպված են յերկար ժա-
մանակ տաք զգեստներ հագնել, վորոնք
հեշտությամբ փոշոտվում ու կեղաստվում
են. իսկ այսպիսի զգեստներն իրենց մեջ
պարունակում են ահազին քանակությամբ
ամեն տեսակի միկրոներ, վորոնց թվում
նաև քութեշ առաջացնող միկրոբներ:

Բացի գրանից, հյուսիսաբնակները՝ կա-
մենալով պահպանել բնակելի շենքերի տա-
քությունը, հազիվ յերեմն մաքրում են
սենյակների ողը, մի բան, վոր իր հերթին
նպաստում ե միկրոբների զարգացմանը:
Բոլորովին այլ ե դրությունը տաք կլիմա
ունեցող վայրերում: Այստեղ բնակիչները
տարվա մեծ մասը հագնում են թեթև կտոր-
ներից կարած զգեստներ, վորոնք հաճախ
են լվացվում և զրանով ել ախտահանվում
են: Արևային բազմաթիվ տաք որերի շնոր-
հիվ սենյակների ողը հաճախ ե մաքրվում:
այս բոլորը միկրոբների զարգացումը կան-
խելու լավագույն միջոցներ են հանդիսանում:

Այս ե նմանապես պատճառը, վոր քու-
թեշղով գլխավորապես հիվանդանում են Տար-

վա ցուրտ յեղանակներին։ Գարնան վերջից միվանդացումների քանակն սկսում է զգալի կերպով պակասել, իսկ աշնան վերջից դրանց թիվը նորից ե սկսում ավելանալ։

ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՒԹԵՇԻՑ

Քութեշի պատճառած մահացությունը միջին հաշվով համարվում է 10%-ի, այսինքն յուրաքանչյուր հարյուր հիվանդից մեռնում էն 10 հոգի։ Մեծագույն մահացությունը տալիս են մինչև 1 տարեկան հասակի յերեխաները. դրանց թիվը համարվում է 25—60%-ի։ Հետագա հասակների մահացությունը միջին հաշվով հետևյալն է.

1 տարեկանից	մինչև	4 տարեկան	16,0%
5	»	9	6,0%
10	»	14	3,3%
15	»	19	4,5%
20 տարեկանից	մեծ		7,1%

Հավասարաշափ չե մահացությունն ըստ ամիսների։ Այսպես, որինակ, Դոնի Ռոստովում, 13 տարվա ընթացքում (1920 թվից մինչև 1932 թիվը ներառյալ) մինչև 3 տարեկան մասումների գութեշից միջին հաշվով մահանալու ցուցանիշները հետևյալ պատ-

կերն ունեն (հաշվելով այդ հասակի բնակիչների յուրաքանչյուր 10 հազար հոգուց)։

Հունվարին	2,5
Փետրվարին	2,2
Մարտին	1,4
Ապրիլին	1,3
Մայիսին	1,1
Հունիսին	0,8
Հուլիսին	1,0
Օգոստոսին	2,1
Սեպտեմբերին	3,1
Հոկտեմբերին	3,5
Նոյեմբերին	2,8
Դեկտեմբերին	3,4

Այսպես, ուրեմն, ցուրտ ամիսներն են, վոր ավելի շատ մահացություններ են տալիս, ինչպես նաև այդ ամիսներում ե հիվանդացումների մեծագույն քանակն, ինչպես արդեն վերն ասացինք։

ԻՆՉՊԵՍ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՎԱՐԱԿՈՒՄԸ

Թե արդյոք հատկապես վոր միկրոբներն են ըստեց հիվանդություն առաջացնողները, այդ մասին զիտնականները մինչև այժմ չեն հանգել միաձայն յեզրակացության։

Այս տեղը, ուր նաև ընկնում ե քու-

թեշի ախտահարույցը (այսինքն հիվանդությունն առաջացնող միկրոբը) կամ, ինչպես ասում են, ինֆեկցիայի (վարակի) մուտքի դոսերը, — դա բերանի, սոսորդի խռոռչն ու քթագլանային տարածությունն եւ: Սոսորդի խռոռչում գտնվում են՝ լեզվատակի մեկ հատ նշագեղձը, յերկու հատ կողքի և մեկ հատ քթակլանային նշագեղձերը: Բացի դրանից, այստեղ են գտնվում նաև մի վորոշ հյուսվածքի բավական մեծացած մսամոլներն, այսպես կոչված աղենոթզները (գեղձագմային հյուսվածքներ). թե այս նշագեղձերը և թե աղենոթզները կազմած են երար հետ: Մինչև 1 տարեկան հասակի մանուկների մոտ դրանք իսպառ չեն զարգացած:

Յեկ վորովինետե քութեշ առաջանող մեկրոբները գլխավորապես նշագեղձերի վրա յեն նստում, ապա ուրեմն պարզ ե, թե ինչու մինչև 1 տարեկան հասակի մանուկները չատ քիչ են հիվանդանում քութեշով:

Հազվագյուտ են այն դեպքերը, յերբ ինֆեկցիան (վարակը) թափանցում ե որդանիզմը վնասված մաշկի միջով. այսպես ե լինում, որինակ, մաշկի այրվածքների կամ այլ վնասումների դեպում:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՐՏԱՎԱՅՏՎՈՒՄ ՔՈՒԹԵՇԸ

Վարակը, վոր արդեն թափանցել ե որդանիզմը, իսկույն հայտնի կերպով չի արտահայտվում: Մինչև որդանիզմի քութեշով վարակված լինելու անկասկածելի նշանների յերեալը միշտ անցնում ե մի վորոշ ժամանակ, վորի ընթացքում չափազանց բազմանում ե միկրոբը:

Թագուն, կամ ինչպես ասում են, ինկուբացիոն շրջանի (որդանիզմի վարակման մոմենտից մինչև հիվանդության յերեսն գալը) ակնողությունը միատեսակ չի լինում. վոմանց մոտ այդ շրջանը տեսում ե ընդամենը 24 ժամ, վոմանց մոտ շարունակվում ե 4—6 որ, իսկ ուրիշների մոտ — նույնիսկ մինչև 14 որ: Դա կախված ե թե ինֆեկցիայի ուժից և թե որդանիզմի դիմադրականության ուժից: Մինչև այժմ հայտնի չե թաքուն շրջանում վարակունակ են արդյոք մանուկները:

Հիվանդության թաքուն շրջանն անցնելուց հետո յերեսն են գալիս քութեշի սկզբնական նշանները. հիվանդության հաջորդական ընթացքը կարելի յե յերեք շրջանի բաժանել. 1) որդանիզմի իր մեջ մտած

ինքեկցիայի դեմ մղած պարարի և նրան
զուգուղեկից մի շարք հնարավոր բարդու-
թյունների շրջանը, 2) առողջանալու շրջանը
և 3) կրկնվող բարդությունների շրջանը,
վորոնք արդյունք են որգանիզմի դիմադրա-
կանության պակասելուն՝ հանդեպ ախտա-
հարույց այն ինքեկցիային, վոր նստած և
որգանիզմում:

Առաջին շրջանը սովորաբար տևում է
8—9 որ։ Հիվանդի տաքությունը մի ան-
գամից շեշտակի բարձրանում է մինչև 39—
40 աստիճան, յերեան և գալիս գլխացավ,
հիվանդի ախորժակը փակվում է, նա զգում
է մարմնի ջարդվածություն և ընդհանուր
թուլություն։ Կուլ տալու ժամանակ զգում
է ցավ, սիրար խառնում, հետ և տալիս
Փոքը յերեխաների մոտ թրթփանք (սուլդո-
րողա) և փորլուծություն ե առաջանում։
Միաժամանակ սկսում են մեծանալ ծնոտի
տակի և պարանոցի գեղձերը, վորոնք ուռեց-
քի նման դուրս են ցցվում։ Սոսորդում նը-
կատվում է, վոր լեզվակը և փափուկ քիմքը
վառ կարմիր գույն են ստացել։ Լեզուն չոր
ե և փառ կապած։

Առաջին իսկ որվա ընթացքում հիվանդի
մաշկի վրա յերեան և գալիս քութեցի յուրա-

հատուկ ցանը (դուրս և տալիս): Յերկ-
րորդ — յերրորդ որը հիվանդանում է սու-
սորդը. այդ հիվանդությունը կոչվում է
անգինա,

Զերմաստինանը։ Զերմաստինի բարձրու-
թյան մասին պետք է ասել վոր նրա տա-
տանման աստիճանը կախված է հիվանդու-
թյան սաստկությունից։ Վորքան ավելի
ծանը է հիվանդությունը, այնքան ավելի
շեշտակի թորիչքներ ե անում ջերմաստի-
ճանը, և այնքան ավելի վատանդավոր է լի-
նում հիվանդի դրությունը։

Սիրը նետ տալը, վորին հետևում է տա-
քության բարձրացումը, լինում է և մեկ
անգամ և շատ անգամներ։ Առաջ հետ և
տալիս կերածի մնացորդները, իսկ հետո ար-
դեն լորձ և մաղձ։ Դիտված է, վոր ինչքան
ավելի ջահել լինի հիվանդը, այնքան ավելի
յերկար ե տևում սիրար հետ տալը և, բացի
դրանից, վորքան առաջին որերում շատ
կրկնվի սիրտը հետ տալը, այնքան ավելի
պետք է վախենալ հիվանդության վախճա-
նից։

Լեզուն։ Քութեցի ախտաճանաչման նշան-
ներից մեկը կարող է լինել լեզվի արտա-
քին տեսքը։ Հիվանդության առաջին իսկ

որերաւմ լեզուն ուռչում ե, հաստանում և
հյութեղ սպիտակավուն փառով ե ծածկ-
վում, Յերբորդ—չըսորդ որում լեզուն սկսում
ե մաքրվել. լեզուն սկսում ե մաքրվել ծայրի
կողմից. մաքրված մասներն ընդունում են
փառ արքայամորի (մալինի) գույն, վորն
առաջին շաբաթվա վերջում անհետա-
նում ե: Թքի արտազատումը պահ-
ում ե:

Երութեները (պուռնկները): Հիվանդի շր-
թունքներն ել հաստանում են և փառ կար-
միր գույն են ընդունում: Յերենն, հիվան-
դության չորբորդ—հինգերուրդ որը, շրթունք-
ների անկյուններում առաջանում են շատ
ցավոտ և արյունածոր ճեղքեր, վորոնք հա-
ճախ շրթունքների արտաքին մաշկի վրա
տարածվող խոցիկների յեն փոխվում:

Ցանը (գուրս տալը): Հիվանդության ա-
ռաջին կամ յերկրորդ որը հիվանդի մաշկի
վրա առաջցած ցանը նույն հիվանդության
ամենակարեռ նշանն ե հանդիսանում: Այս
ցանն ամենից առաջ յերևան ե գալիս
ականջների հետևում, այսպես կոչված պըտ-
կաձև յերւատների վրա, նույնպես և զգի
յերկու կողմը: Ապա յերկու, և ամենաշատը
յերեք որում ցանը փոխվում ե կրծքի, մեջքի

ու փորի վրա, իսկ մի փոքր հետո — նաև
վոտքերի վրա: Ձեռքի ափերը, ներբանը
(վոտատակը) և զլիի մազոտ մասը հազվա-
գյուտ դեղքերում միայն ծածկվում են ցա-
նով, Քութեղի ցանը իբրենից ներկայացնում
ե կարմիր կլոր բծիկներ (պուտեր), ամեն
մեկը մանր սիսեռի հատիկի մեծությամբ:
Բծերը տեղ-տեղ իրար են խառնվում: Յեր-
բեմն նրանք մի քիչ պնդանում և թեթև կեր-
պով մաշկի յերեսին են ցցվում: Ինքը մաշ-
կըն ել մի քիչ կարմրում ե և իր վրա
շարված բծիկների շնորհիվ՝ մարմարինի
յե նմանում:

Քութեղի ցանը մյուս տեսակի ցաներից
տարբերվում ե նաև հետևյալ բնորոշ հատ-
կանիշներով: քութեղի ցանը կարծես խնա-
յում ե քթի և բերանի շրուջը, վորը՝ վառ-
կարմրագույն այտերի միջև՝ աչքի յե ընկ-
նում իր դժգունությամբ: Ստացվում ե այս-
պես կոչված «քութեղալին յեռանկյունի»:
Սա մի շատ կարենոր հատկանիշ ե, վոր հնա-
րավոր ե դարձնում անսխալ կերպով զա-
նազաննել քութեղի ցանը կարմրուկի ցանից:
Պետք ե նկատել, վոր քութեղի ցանը հավա-
սարաչափ չի ծածկվում մաշկը, նա շատ խիտ
է լինում թեատակում և աճուկների ու ար-

մունկների ծալքերում: Այդ մասերում յեր-
բեմն առաջանում է նաև կետային արյու-
նացում:


Յանը լինում է տարբեր գույների՝ բաց-
կարմրից սկսած մինչև կապարային-բոսո-
րային գույնը: Յեթե ցանը հենց առաջին
որը կապարային-բոսորային գույն ունենա-
ն ապա՝ մաշկի վրա պղտոր-մօխրագույն
հետք թողնելով՝ անհետանա, դա նշանա-
կում ե, վոր հիվանդությունը բացառիկ
ծանր տեսակից ե և մեծ մասամբ մահով ե
վերջանում: Քութեշի նորմալ զարգացած
ցանը յերբորդ—չորրորդորն սկսում ե գույնը
տալ և հիվանդության վեցերորդ—ութերորդ
որն խպառ անհետանում ե նույն հաջոր-
դականությամբ, ինչպես և առաջացել եր:

Թեփուսամբ: Հիվանդության յերբորդ—
չորրորդ որն սկսվում ե մաշկի թնգոտումբ:
Մարմնի վրա մանրիկ թեփեր են՝ առաջա-
նում. ձեռքերի և փոտքերի մաշկը պոկ ե
դալիս ամբողջ շերտերով, յերբեմն նույնիսկ
«ձեռնոցի» ձևով. հազվագյուտ գեպերում
ընկնում ե նաև յեղունքը: Թեփուսումը տե-
փում ե չորսից մինչև վեց շաբաթ՝ հիվան-
դության սկզբից հաշված:

Սեղինա: Յանի հետ միաժամանակ, վոր

քութեշի գլխավոր հատկանիշներից մեկն ե,
տեղի յե ունենում սոսորդի հիվանդությունը,
վոր անգինա յե կոչվում և վորն անպատ-
ճառ զուգուղեկից ե քութեշին: Հիվանդու-
թյան հենց առաջին որը հիվանդի սոսորդը
սաստիկ կարմրում ե. այդ կարմրությունը
վորոշակի կերպով բաժանված ե կարծր քիմ-
քի լորձաթաղանթից, վորը շարունակում ե
պահպանել իր նորմալ գույնը:

Հիվանդացման թեթև կամ ծանր լինելուց
ե կախված նաև սոսորդի հիվանդության
աստիճանը: Թեթև զեպքերում սոսորդի հի-
վանդությունը սահմանափակվում ե միայն
նրանով, վոր նշազեղձերը ծածկվում են
թեթև փառով, վորը հինգերորդ—վեցերորդ
որն արդեն անցնում ե. փառի հետ միա-
ժամանակ անցնում ե նաև կուլ տալու ցավը:
Միջին ծանրության զեպքերում յերբ փառը
թաղանթային բնույթ ունի, անգինան տե-
փում ե 8—10—12 որ: Բայց յերբեմն պա-
տահում ե, վոր սոսորդի և քթազլանի ամ-
բողջ տեղամասերը կենազուրկ դառնում, մեռ-
նում են: Այդ մեռնելուց քայլայվում են
նույն տեղում գործող արյունատար անոթ-
ները, վորի հետևանքը կարող են լինել
այնպիսի սաստիկ արյունահոսություններ,



Վոր հիվանդը 3—5 րոպեյում մահա-
նում ե:

Օնկախ հիվանդության ծանրությունից,
փառի ծավալման հետևանքով առաջանում
է՝ այսպես կոչված քութեշային հարբուխը,
վարի ժամանակ քթի արտազատումներում
պարունակվում են ահազին քանակությամբ
միկրոբներ, վորոնք ընդունակ են քութեշ
հիվանդությունն առաջացնել:

Հարբուխի կապակցությամբ հիվանդները
քթով են շունչ առնում, և՝ քթականում
կուտակված լորձունքի պատճառով՝ հիվանդի
շնչառությունը խոմքոցի — վնչոցի յե նմա-
նում:

Հիվանդության ընթացքը կախված է ինչ-
պես ինֆեկցիայի ուժից, այնպես ել որգա-
նիզմի դիմացրականության ուժից: Լինում
են դեպքեր, յերբ ինֆեկցիան այնքան ուժեղ
ե, իսկ որգանիզմն այնքան թույլ, վոր հի-
վանդությունն ընթանում է ուղղակի կայ-
ծակի արագությամբ և հիվանդը մի քանի
ժամում մեռնում է: Մյուս կողմից լինում
են և այնպիսի դեպքեր, յերբ հիվանդու-
թյունը չափազանց թեթև կերպով է ընթա-
նում: Մյուսպիսի դեպքերում տաքությունը
մի քիչ միայն բարձրանում է, գեղձերն ան-

նշան կերպով են մեծանում, անզինան քիչ
ե անհանգստացնում հիվանդին: Նման զեպ-
քերում ցանն այնքան արագ է անցնում,
վոր շատ անգամ բժշկին չի հաջողվում դի-
տել այն:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՈՒԹԵՇԻ ԺԱՄԱՆԱԿ

Սակավ են այն զեպքերը, յերբ քութեշը
որգանիզմի համար անցնում է միանգամայն
անհետևանք: Համարյա միշտ այդ հիվան-
դության հետ կապված են նաև ուրիշ յեր-
բեմն շատ ծանր հիվանդություններ: Այդ
բարդություններից գլխավորները հետևյալ-
ներն են. 1) յերիկամունքների բորբոքում,
2) միջին ականջի բորբոքում, 3) գեղձերի
բորբոքում, 4) սրտի մկանների բորբոքում
և 5) հոգերի բորբոքում:

Յերիկամունքների բորբոքումը: Բարդու-
թյունների շարքում, ըստ զեպքերի հաճա-
խության, առաջին տեղը բռնում է յերի-
կամունքների բորբոքումը: Դա մի չափա-
զանց անախորժ բարդություն ե: Հաճախ
նա յերիան է գալիս այն ժամանակ, յերբ
հիվանդն ըստ յերևույթին արդեն բոլորովին
առողջացել ե: Բայց հանկարծ նրա տաքու-

թյունն սկսում ե բարձրանալ և յերբեմն 40
աստիճանի յե համում, ախորժակը փակ-
վում ե, առաջանում ե ընդհանուր թուլու-
թյուն, աչքի կոպերն սկսում են ուռչել,
ապա ուռչում ե նաև ամբողջ յերեսը: Հի-
վանդի մեզը քանի գնում պակասում ե,
ուռուցքն ավելանում ե և, յերիկամունք-
ների բորբոքումը շարունակաբար սառտկա-
նալու դեպքում՝ հիվանդի մեզն իսպառ
կտրվում ե: Իսկ այս հանգամանքն արդեն
լուրջ վտանգ ե սպառնում հիվանդի կյանքին:

Յերբեմն պատահում ե, վոր յերիկամունք-
ների բորբոքումն անցնում ե առանց հետե-
վանքի, թեև ապաքինումը տեսում ե շատ
յերկար, բայց պատահում են և այնպիսի
դեպքեր, յերբ հիվանդի յերիկամունքներն
ամբողջ կյանքում վնասված են մնում: Դրա
հետևանքն այն ե լինում, վոր հիվանդի վրա
ժամանակ առ ժամանակ այտուցներ են
(ոտյոնկի) առաջանում, մանավանդ այն ժա-
մանակ, յերբ նա սկսում ե գործածել բիրկ
(կծու, թթու և այլն) մննդեղեն և ալկոհոլ
պարունակող խմիչքներ:

Միջին ակտունի բորբոքումը: Յերկորդ
տեղն, ըստ դեպքերի հաճախության, բննում
ե միջին ականջի բորբոքումը, վոր հաճախ

փոխվում ե թարախային բորբոքման: Այդ
բորբոքումից ծակվում ե թմբկաթաղանթը, և
ականջից թարախի արտազատում ե առաջա-
նում: Այսպիսի արտազատումը յերբեմն կա-
րող է տեղել յերկար ժամանակ ու վերջի-
վերջո առաջ ե բերվում լսողության թու-
լություն: Բացի դրանցից, յերբեմն ել պատա-
հում ե, վոր թարախը, միջին ականջից գուրս
ծորալու փոխարեն, գանգոսկրների միջով
համում ե գանգուղեղի պատյաններին և
առաջ ե բերում նրանց բորբոքումը, վոր հա-
ճախ մահ ե պատճառում հիվանդին:

Գեղձերի բորբոքումը սովորաբար զարգա-
նում ե հիվանդության յոթերորդ և ամսներորդ
որերում՝ տաքության շեշտակի բարձրացու-
մով: Բորբոքման հետ միաժամանակ գեղձերը
թարախակալում ու մեծանում են:

Սրբի մկանների բորբոքումը քութեշի բա-
վական հաճախաղեալ հիվանդություններից
մեկն ե: Հիվանդության հետ սկզբից սիրտն
արդեն սկսում ե ուժգին կերպով գործել,
վոր արտահայտվում ե զարկերակի (պուլսի)
արագ զարկով: Այս յերեվույթը, գեռ մինչև
ցանի յերեվան գալը, բժշկին մտածել ե տա-
լիս, վոր հիվանդությունը քութեշ ե: Բայց
զարկերակի այս արագ զարկը տեղում ե 12

որից վոչ ավելի. սրան հաջորդում ե հակառակ յերեվույթ, այսինքն յերակազարկը շեշտակի գանգաղում ե: Սրտի հետագա զբությունը և գործունեյությունն ամբողջապես կախված ե հիվանդացման ծանրությունից և սրտի մկանի հիվանդության աստիճանից:

Հոդերի բորբոքումը: Հիվանդանում են գլխավորապես մանր հողերը, ինչպես՝ մատների, ձեռքի, դաստակի հողերը: Ավելի սակավ են խոշոր հողերի, որինակ՝ սրնքա-գարշապարի, ծնկների, ուսերի և այլ հողերի բորբոքումները: Սակավ ե պատահում կոկորդի կոճիկների բորբոքումը, մի քիչ ավելի հաճախ են պատահում հետկլանային թարախոտ ուռեցքներ, առավելապես յերեխաների մոտ:

Այս բոլոր բարդություններով վերջանում ե հիվանդության առաջին շրջանը: Դրան հաջորդում ե յերկրորդ շրջանը, վորն, առաջինի պես, տեփում ե 8—9 որ: Այս շրջանը, նայած հիվանդության ծանրության և բարդությունների տեփողությանը, կարող ե կարճատեղ լինել: Այս շրջանը յերբեմն կարող ե բոլորովին ել չլինել: Այսպես պատահում ե սովորաբար այն ժամանակ, յերբ առաջին շրջանի բարդություններն այնքան լուրջ են, վոր կարծես առանց ընդմիջման անց-

նում են հիվանդության յերրորդ շրջանը, մի բան, վոր հատկապես պատահում ե յերիկամունքների բորբոքման դեպքում:

Յերրորդ շրջանում, այսինքն հիվանդացման 17—23-րդ որում, առաջ են գալիս մի շարք կրկնվող բարդություններ, վորոնք արտահայտվում են պարանոցի գեղձերի բորբոքումով կրկնվող ցանով (յերբեմն տարրինակ բնույթ կրող), հողերի բորբոքումով և յերիկամունքների կրկնվող բորբոքումով, յեթե մինչ այդ զգալի կերպով չի արտահայտվել առաջին բորբոքումը: Յերիկամունքների յերկրորդ անգամ կրկնվող այս բորբոքումը չափազանց գտանգավոր ե որդանիզմի համար, վորն արդեն սաստիկ հյուծվել ե հիվանդության դեմ պայքարելուց:

Խճչակի վարակիչ նիվանդությունների հետ ե գուգորդվում յերբեմն հութեցը: Յերբեմն պատահում ե, վոր քութեշի վարակի հետմիասին որգանիզմը թափանցում և վորեւ մի ուրիշ վարակ կա: Այսպիսի դեպքերում որդանիզմում զարգանում ե յերկու հիվանդություն: Այս հանգամաքը, իհարկե, ավելի և թուլացնում ե հիվանդին և մահվան դուռը տանում նրան: Զուգուղեկից հիվանդություններից ամենավտանգավորը դիֆթերիան ե:

Նմանորինակ մյուս հիվանդություններն են՝ ջրածաղիկը (սուտ ծաղիկ) և կարմիր քամին (ռնժման):

Արդյո՞ք յերկրորդ անգամ քութեօվլ հիվանդանում են: Արդեն միանդամ քութեշով բռնված հիվանդն այլևս զերծ ե լինում կրկին անգամ հիվանդանալուց: Շատ հազիվ ե պատահում, վոր մի անգամ քութեշով հիվանդացած մարդը նորից հիվանդանա նույն հիվանդությամբ:

ՔՈՒԹԵՇԻ ՔՈՒԺՈՒՄԸ

Քութեշի բուժումը տարվում ե յերկու ուղղությամբ. առաջինը՝ պայքար ե մղվում հենց իրեն՝ ինֆեկցիայի դեմ, և յերկրորդը՝ պայքար հիվանդության արտահայտումների դեմ:

Ինձեւեկցիայի դեմ պայքարը տարվում ե այս կերպ. որգանիզմի մեջ մտցնում են հատուկ պատրաստված մի շիճուկ, վորն անվնաս ե դարձնում որգանիզմում գտնված ինֆեկցիային և դրանով իսկ նպաստում ե որգանիզմի ազատմանը նրանից: Շիճուկի կիրառումն այսպես է հիմնավորվում. յերբ կենդանական որգանիզմը թափանցի ախտա-

հարուցյ մի միկրոբ (ճիշտ ե, վաչ ամեն տեսակ միկրոբ), որգանիզմն սկսում ե արտադրել հատուկ նյութեր, վորոնք ասես մասնագիտանում են տվյալ միկրոբի դեմ պայքարելու գործում, միկրոբի, վոր ձգտում ե բազմանալ որգանիզմում: Յերբ որգանիզմը կարողացավ բավականաչափ քանակությամբ այսպիսի նյութ արտադրել, վոր հակամարմին ե կոչվում, ապա նրան կհաջողվի անվնաս դարձնել արդեն զարգացած միկրոբներին և վոշնչացնել նրանց ու զբանով իսկ հաղթահարել նրանց առաջացրած հիվանդություններին: Հակառակ դեպքում մեռնում ե ինքը՝ որգանիզմը: Այդ հակամարմինները գտնվում են նրանք արտադրող մարդու կամ կենդանու արյան շիճուկներում:

Այսպես, յեթե այսպիսի մարդուց կամ կենդանուց վերցնենք շիճուկ ու մացնենք այն ուրիշ որգանիզմը, ապա դրա հետ միաժամանակ նրա որգանիզմը մտցրած ենք լինում հատուկ հակամարմիններ, վորոնք ընդունակ են հաջողությամբ պայքարել վորոշ միկրոբի դեմ, այսինքն հենց զբանով մենք ուժուղացրած ենք լինում նույն որգանիզմի պայքարելու ընդունակությունը և հնարավորությունը:

Այդպես ել անում են: Վարակում են ձիռն
քութեց առաջացնող միկրոբների աննշան
քանակությամբ և, վորոշ ժամանակ անցնե-
լուց հետո, յերբ ձին արդեն կարողացել ե
համապատասխան հակամարմիններ արտա-
դրել, սպատշաճ յեղանակով մշակում են
գրանք, իսկ ստացված շիճուկը ներարկում
են քութեցով հիվանդներին: Բժշկության
համար լավ ե ոգտվել այն շիճուկով, փորն
ստացվել ե այնպիսի հիվանդից, վորի հիվան-
դության սկզբից անցել ե 3—4 շաբաթ և
փորն արդեն առողջանալու վիճակումն ե:
Այսպես շիճուկն ավելի շատ հակամարմին
և պարունակում իր մեջ:

Հիվանդության արտահայտումների դեմ
պայման կախում ունի նույն արտահայ-
տումների բնույթից: Հատկապես պետք ե
ուշադրություն դարձնել սրտի գործողու-
թյան վրա:

ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ

Քութեցով հիվանդը պետք ե ապահովված
լինի կենցաղին համապատասխան պայ-
մաններով, փորոնք կարող են կանխել մի
քանի բարդությունների առաջացումը:

Այն սենյակում, ուր պառկած ե հիվանդը,
ողը պետք ե մաքուը լինի և թարմ: դրա
համար հարկավոր ե վորքան կարելի յե հա-
ճախ ողափոխել սենյակը: Զմեռն ողափո-
խումը կատարվում է ողանցքը բաց թողնե-
լով կամ փողոց տանող դուռը բանալով,
իսկ ամառը բոլոր ժամանակ պատուհան-
ները պետք ե բաց լինեն:

Հիվանդի սենյակը պետք ե հավաքել, մաք-
րել ամեն որ, ընդ փորում հատակն անհրա-
ժեշտ ե թաց լաթով ավելել: Թաց լաթով
հարկավոր ե սրբել նաև այն կահկարասին,
վոր հիվանդի սեյնակումն ե գտնվում: Զպետք
ե մթնեցնել այն սենյակն, ուր հիվանդն
ե պառկած: իսկ յեթե արեվի ուղղաձիգ
ճառագայթներն ընկնում են հիվանդի վրա,
այդ գեղաքում կարելի յե վարագույրներ
կախ տալ պատուհաններին, և այն՝ սպի-
տակ վարագույրներ (կարիքն անցնելուց
հետո վարագույրները պետք ե հանվեն):

Հիվանդին պետք ե լվանալ ամեն որ:
Լվանում են նրա յերեսն ու ձեռքերը: Յեթի
հիվանդը հասակավոր ե, նրան պետք ե վահ-
նանստեցնել յերկու որը մի անգամ, 10—15
րոպեյի չափ: Վաննայի ջուրը պետք ե ունենա-
28—29 աստիճան տաքությունը ստ Ռեռմյու-

ըիւ հսկյեթե հիվանդը յերեխա յե, ապա հիվանդության առաջին յերեք շաբաթը նրան լողացնել ե հարկավոր հնգորյակում մի անգամ. այսուհետև նրան վանաս նստեցնել որբնդմնջ:

Հիվանդը պետք ե ունենա առանձին, պառկելու համար, մահճակալ: Վորպեսզի հիվանդի մարմնի վրա պառկելավերքեր չառաջանան, անհրաժեշտ ե ուտինե շրջանակի վրա պառկեցնել նրան:

Հիվանդի տեղաշորի համար վոչ մի զեպքում չի կարելի մորթե կտորներ կամ իրեր (մուշտակ, քուրք) գործածել. գրանք շատ դժվարությամբ են մաքրվում և ախտահանվում: Պետք ե հետեւել, վոր հիվանդի ճերմակեղենը մաքուր լինի և չոր. հիվանդի վրա պետք ե սավան ծածկել, վրայից ել թեթև տաք վերմակ:

Կոկորդի ու բերանը պետք ե վողողել որը
2—3 անգամ բորաթթվային (բորնայա կիսլոտա) յերկտոկոսային լուծույթով (1 բաժակ ջրին 1 թեյի գդալ), ջրածնի գերաթթվային (պէրեկիս վոգորնդա) լուծույթով (1 բաժակ ջրին 1 ճաշի գդալ) կամ հասարակ յեռացրած ջրով: Փոքր յերեխաների բերանը սրսըկել ե հարկավոր: Մըսկելիս՝ յերեխաներին

կողքի վրա յեն պառկեցնում մահճակալի յեղբին, իսկ զլուխը դարձնում են ցած, թասի վրա: Ուտելուց հետո բերան վողողելը պարտադրական ե:

Շրթունքներն ու լեզուն սաստիկ չըրանալիս, նրանց պետք ե քսել վաղելին, վաղելինի յուղ, կամ յեռացրած բուսական յուղ:

Ականջի խոռոչը: Վորովինետև ականջի խոռոչը հաղորդակից ե քթակլանային տարածությանը (Յեփստախյան կոչված խողովակով), դրա համար քութեշով հիվանդներին թույլ չի տրվում հաճախ և ուժգին խնչել, վորովինետև խնչելիս քթակլանային տարածության մեջ ուժեղ ճնշում ե տառաջանում, վորի շնորհիվ միկրոբները Յեփստախյան խողովակով անցնում են ականջի խոռոչը և բորբոքման պրոցես ե սկսվում: Բացի զրանից, այդ բարդությունից խուսափելու համար, պետք ե քթածակերը սրբել ջրածնի գերաթթվային կամ բորաթթվային լուծույթի մեջ թաթախած մաքուր կտորով կամ մարլայով: Ուռած գեղձերի վրա դրվում ե տաքացնող կոմպրես (արաղով կամ հասարակ ջրով). կոմպրեսը փոխել 4—5 ժամից:

Հիվանդի սենունդը: Հարկավոր ե հատուկ ուշադրություն նվիրել հիվանդի մննդին:

Հիվանդության առաջին շաբաթը հիվանդին կարելի յե տալ կաթ, մածուն, թթվասեր (սմբետանա), զանազան կիսելներ, անմիս ապուրներ, կաթնապուր, սպիտակ բաքսիմատ՝ անեկ խմորից թխած, տրորած ինձոր և շաքար:

Հիվանդի տաքությունն իջնելուց հետո մննդի տեսակները կարելի յե ընդարձակել՝ հիշվածներին ավելացնելով նաև խմորեղեն կերակուրներ՝ մակարոն, վերմիջել. կարելի յե տալ տրորած կարտոֆիլ՝ կարագով խառը, տրորած բանջարեղեն, խաշած թարմ ձուկ, կարտոֆիլով ձենապուր (ուխա), արածան, խաշած միս: Կերակուրն աղել պետք չե. պետք ե յեփի առանց աղի: Շատ ցանակալի յե կարագ յուղ տալ հիվանդին:

Հիվանդության 1⁷—18-րդ որվանից սկըսած հիվանդին նորից տալիս են նույն սնունդը, փորը տրվում եր առաջին շաբաթում. այսպես շարունակվում ե մինչև 25-րդ որբւ Յեթե մինչ այդ պարզված լինի, վոր հիվանդի յերիկամունքները կարգին են և հիվանդ չեն, ապա հիվանդին թույլ են տալիս կերպենալ անկողնից և աստիճանաբար սովորական սնունդն են սկսում տալ, բացի սուր՝ թթու, կծու, աղի և այլն կերակուրներից ու

ծխով ապխտած և աղ գրած ուտելիքներից (այս բոլորը չե կարելի տալ հիվանդին վեց շաբաթ՝ հիվանդության սկզբից): Խիստ արգելվում ե հիվանդին տալ ալկոհոլային խմիչքներ:

Ամանեղենը: Այս բոլոր ամանները, վարոնցով ոգտվում ե հիվանդը թե ուտելիսմելու և թե իր բնական կարիքները հոգալու համար, պետք ե խնամքով ախտահանվեն՝ լվանալու համար հատուկ պատրաստված լուծույթներով, վորոնք ախտահանական միջոցներ են կոչվում (սուլեմա, կարբոլյան թթու): Յեթա այս լուծույթները ձեռքի տակ չգտնըվեն, այդ դեպքում ամանեղենները պետք ե լվանալ լավ յեռացրած ջրով, իսկ ավելի լավ կլինի ամանները 10—15 րոպեյի չափ յեռացնել ջրում: Վոչ մի կերպ թույլ չի տրվում նույն ընտանիքի անդամներից վորեկմեկին ոգտվել այդ ամաններով:

Հիվանդի արտազատած լորձը, բուժը պետք ե լաթով սրբվի, հավաքվի. այդ լաթերը տեղնուտեղը պետք ե այրել, վորովհետև լորձի և թքի մեջ են այն միկրոբները, վորոնք քութեց հիվանդություն են առաջացնում: Հիվանդի առողջանալուց կամ նրա մահից հետո, այն բոլորը իրերը, վորոնցով նա ոգտվել ե,

ինչպես նաև նրա պառկած սենյակը, հարկավոր ե ախտահանել բժշկի ցուցունքների համաձայն:

Հիվանդի մեկուսացումը: Քութեղից առողջացած հիվանդը դեռ շարունակում է վտանգավոր համարվել առողջների համար այն իմաստով, վոր նա՝ իր հիվանդանալու որից սկսած՝ 40 որ շարունակ ընդունակ է վարակել ուրիշներին. Վորովինետև նրա սոսորդում դեռ պահպանվում են միկրոբները: Հետևի վարար վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ վոր առողջացած հիվանդը շփում ունենակողմանի վորներ անձի հետ, այլ հարկավոր ե նրան առանձնացրած պահել հիվանդության սկզբից վոչ պակաս՝ քան 40 որ, իսկ նրան շրջապատողներին՝ 12 որից վոչ պակաս:

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՀԻՎԱՆԴԱՑՈՒՄԸ

Մեր պայմաններում, յերբ ունենք ահազին թվով դպրոցներ, մանկապարտեղներ, մանկահրապարակներ, մսուրներ և այլ մանկահմարներ, անհրաժեշտ ե առանձնապես զգույշ լինել, վորպեսզի մի յերեխայի հիվանդությունը աղբյուր չդառնա նույն հիվան-

դության լայն ծավալմանը մանուկ հասակի բոլոր յերեխանների մեջ: Դրա համար, հենց վոր յերեխան զգա վորներ թուլություն, հենց վոր՝ առանց հայտնի պատճառի, բարձրանա նրա տաքությունը, և մանավանդ, յերբ յերեխան գանգատվի, վոր կուլ տալիս նրա կոկորդն ե ցավում, կամ յերբ մարմնի վրա վորներ ցան յերեվա (մանավանդ՝ յերբ ցանը յերեվում ե հիվանդանալու առաջին-յերկրորդ որը), անհրաժեշտ ե անմիջապես բժշկի դիմել:

Զպետք ե յերբեք մոռանալ, վոր քութեշն իր վարակելիությամբ մի այնպիսի բացառիկ հիվանդություն ե, վորն առաջացնում ե յերբեմն մինչև մահը աեվող բարդություններ և շատ անգամ ել մահ ե պատճառում հիվանդին:

Յերեխանների՝ քութեղով հիվանդանալու առաջն առնելու նպատակով, նրանց ամեն տարի հակաքութեցային պատվաստ են անում: Բայց այս պատվաստն անում են վոչ թե անխտիր բոլոր յերեխաններին, այլ միայն նրանց, ովքեր զգայունակ են այդ հիվանդության հանդեպ: Իսկ զգայունակությունն իմացվում ե հետեւյալ յեղանակով: Յերեխայի մաշկի տակ շպրիցով ներարկում են վորոշ, բոլորովին անվնաս քանակությամբ քութեցային թույն

(0,1 խորանարդ սանտիմետր): Յեթե յերեխան զգայունակ ե քութեշղով հիվանդանալու, ապա ծակած տեղում մի որից առաջնում ե կարմբություն (բժշկներն այդ կոչում են՝ Դիկի դրական ռեակցիա, այսինքն հակազդեցություն): Հակառակ պարագային, այսինքն զգայունակության բացակայության դեպքում, ծակված տեղը վոչ մի փոփոխության չի յենթարկվում (Դիկի բացասական ռեակցիա):

Հետեվաբար, հակաքութեշային պատվաստումներ անում են այն յերեխաններին, վորոնք ունեցել են Դիկի դրական ռեակցիան: Նրանց մաշկի տակ ներարկում են 3—4 անգամ՝ 7—10—14 որ միջանցումներով՝ սպանված միկրոբներ (ստրեպտոկոկեր), վորոնք հանված են քութեշավոր դիակի սրտի արյունից: Այս միկրոբները չեն կարող քութեշային հիվանդացում առաջ բերել, վորովնետի սպանված են: Բայց միևնույն ժամանակ այս միկրոբներն ստիպում են, վորպեսզի որգանիզմն արտադրի այն հատուկ նյութերը (հակամարմիններ), վորոնք պաշտպանում են որգանիզմը քութեշային վարակի դեմ մղված պայքարի ժամանակ:

Յեթե հետո թափանցի որգանիզմը քու-

թեշի վարակը, այդ դեպքում որդանիզմն արդեն բավականաչափ լավ պատրաստված է լինում նրա դեմ պայքարելու:

Այս պատվաստումներն զգալիորեն իջեցնում են հիվանդացումների թիվը: Այսպես, որինակ. Դոնի Ռոստովի դպրոցներում չորս տարվա ընթացքում այդորինակ պատվաստումների անցկացման հետեւ վաճառքով, քութեշով հիվանդացումների թիվը 5 — 7 անգամ պակասեց:

Բայց այս պատվաստումները քութեշով հիվանդանալու առաջն առնելու միջոցներից միայն մեկն են հանդիսանում: Հիվանդացումների կանխսման ընդհանուրը յեղանակները և բնակչության աշխատանքի ու կենցաղի առողջապահության միջոցառումներն են, վորհիմնական էերն են խաղալու այս գործում:

Առողջապահության միջոցառումների համար պետությունն ամեն տարի խոչորգում արներ ե ծախսում: Բայց վորպեսզի առողջապահական աշխատանքը լայնածավալ ընույթ ունենա, վորպեսզի նա փորոշ դրական արդյունքներ տա, անհրաժեշտ ե այս գործին ներգրավել ամբողջ բնակչությանը:

Մարդկանց աշխատելու և բնակելու շենքերի մաքրության համար մղվող պայքարը,

մաքուր և թարմ ողի համար մղվող պայքարը, անձնական հիգիենայի հիմնական պահանջների պահպանումը, մասսայական-սանիտարական կուլտուրայի բարձրացումը — ահա ինչը կարող է վոչնչացնել այն պայմանները, վորոնք նպաստում են վարակիչ հիվանդությունների ծավալմանը:

Մենք արդեն իսկ ձեռք ենք բերել այդ հիվանդությունների շեշտակի նվաճումը՝ ցարական-կալվածատիրական Ռուսաստանի համեմատությամբ։ Մեր խնդիրն է իսպան վերացնել նրանք։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ենչ է վարակիչ հիվանդությունը	3
Ինչպես ե փոխանցվում քութեղը	5
Ով և հիվանդանում քութեղով	5
Մահացությունը քութեղից	8
Ինչպես ե տեղի ունենում վարակումը	9
Ինչպես ե արտահայտվում քութեղը	11
Բարդությունները քութեղի ժամանակ	19
Քութեղի բուժումը	24
Հիվանդի ինումքը	26
Ինչպես կանխել հիվանդացումը	32

ԸՆԿԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ

Հայտնեցեք ձեր կարծիքը այս գրքի մասին
հետեւվյալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.
Նամակները կարելի յեւ ուղարկել առանց
նամակադրումի:

Отв. ред. Г. А. Потенц

Пом. Тех. ред. Д. М. Джинибалаян

Издание 373|4633. Об'ем 1/4, печ. листа. Статформат А6—105x148
Уполномочия 00-11427. Тираж 800 экз. Заказ 3837. Сдано в набор
4-VIII-1935 г. Подписано в печать 25-VIII-1935 г.

Типография им. „Стачки 1902 года“ г. Ростов на Дону.

«Ազգային գրադարան



NL0273915

7467

ԳԻՆԸ
Цена 25 գր. կոպ.

Ա 94.80 ₧

На армянском языке

М. В. МОНОСЗОН

**СКАРЛАТИНА И МЕРЫ
БОРЬБЫ С НЕЮ**

А З О В О - Ч Е Р Н О М О Р С К О Е
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д. Буденновский пр. № 53

Կ Ր Ա Պ Ա Հ Բ Ս Ց

Խոստով-Դամ, Մատկովիկյան, № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԿԳՈՑԵՒՏՐ)